

Թեան, ձեռագործութեան, կարի, ձևի և չափա-
ւորութեան ու խնայողութեան:

ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի Ք. Ա. Ի. Կ. Կ.:

Ա.Ի.ԵՍԱՐԱՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԻ.

Այս օրերս Ախալքալակայ բնակիչք երկու հօ-
րեղբորորդիք Խաչատուր և Կարապետ Տէր Մի-
նասեանցնէր՝ Ստեփաննոս Քաջանայ Առփանեան-
ցի յորգորանօք՝ մի հին գրչագիր Աւետարան և
նորա վերայ արծաթեայ շղթայով կցուած մի
փոքրիկ մատուցք Ս. Յակոբայ, որք իւրեանց նա-
խորդնորից էր մնացած սոցա մտա և դոցա պատ-
ճառով ի վաղուց հետէ իւրեանց տունը ուխտա-
տեղի էր դարձած, ընծայեցին տեղւոյս Ս. Սան-
դիսեան Օրիորդական դպրոցին, որպէս զի այդ
Աւետարանը գրուելով քաղաքիս նկնեցեալ, դո-
րա ուխտաւորնորից գոյացած արգիւնքը տրուի
Օրիորդական դպրոցի աղքատիկ աշակերտուհեաց
օգտին, որք իւր արգիւնքի սակաւութեան համար
շատ բարեխաղտնի օժանդակութեանը կկարօտի:

Աւետարանն է միջակ գրութեամբ՝ մի երեսը
միայն արծաթապատ խաչելութեան պատկերով,
գրուած Հայոց ՅՅԾ (Թուականին, մագաղաթի նը-
ման թղթի վերայ) բոլորագիր գրերով, որոյ վեր-
ջը, «Հանգիստ երանկւոյն Յովհաննու Աւետա-
րանչի», պատմութիւնից յետոյ կայ մի երկար
յիշատակարան, որից քաղեցինք այս հարկաւոր-
եալը:

«Այսմ Աստուածախաւս աւետարարող սուրբ
«Աւետարանիս ցանկազող եղէ նուաստ որդի
«և գրեցի զսա յաւժարութեամբ սրտի, և ես
«նուաստ Քաջանայ սուտանուն Սիմէօն գրեցի
«անարուեստ ձեռամբ» . . . և ըն:

«Եղև աւարտումն գրութեան սուրբ Աւետա-
«րանիս ի թուականիս Հայոց ՅԾԵ, յԱստուա-
«ծագարբ Հայրապետութեան Տեառն Մերոպայ
«Հայոց Կաթողիկոսի և Քրիստոսապսակ թա-
«ղաւորութեան Հայոց Կոստընդնեայ և արժա-
«նատափեւ եպիսկոպոսութեանն սրբաւեր և Աս-

«տուածամեծար Արքեպիսկոպոսի Տեառն Ստե-
«փաննոսի և ի գաւառիս Եկեղեցաց և մայրաքա-
«ղաքիս Երզնկայ կոչեցեալ: Նա և տեղի հան-
«գոտեան մերոյ, յորում գրեցար ի սուրբ Փրկչիս
«գունն Կամփայ ի յընտիր աւրինակէ:»:

Արարատի անցեալ տարուայ Հոկտեմբեր ամ-
սագրի մէջ ինձանից գրուած և հրատարակուած
տեղւոյս Պարալէթ գիւղի մասունքի մասին լսում
ննք, որ Սուլտայ գիւղի Թորոս աղա Թորոսեանց
հարուստ անձը 500 թուրքի է տուած այդ մա-
սունքը ձեռք բերելու համար, բայց տէրը չէ տուած:

ԿԱՐԱՊԵՏ Տ. Ս. ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի Ք. Ա. Ի. Կ. Կ.:

ՅՈՒՅԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարձանքիւն):

Ի Վ.Ի.ՃԱԿԻՆ, Ա.Գ.Է.ՔՍԱՆԳՐԱՊՈՒՈՅ.

Հասարակութիւն Գեօրան գեղջ	6
Նոյն գիւղացի ՍաՀակ Քաջանայ	1
« Ելէքսանդր Մարուգեան	50
« Ասատուր Յարութիւնեան	60
« Յարութիւն Մարուգեանց	20
« Մովսէս Տէր Սուքիասեանց	60
« Պետրոս Մանուկեան	40
« Աւետիք Նիկողոսեան	40
« Պետրոս Գալստեանց	50
« Հախոյ Մարգարեան	40
« Ստեփան Առաքելեան	50
« Երեցիօխ Գաբրիէլ	40
« Մարտիրոս Ղազարեանց	50
Քիչլիճեցի Սուքիաս քաջանայ Տէր	
Սուքիասեան	1
« Պապոյ Սարգսեան	1
« Ղարգիրես Գանաղեանց	1
« Երեցիօխ Պալոյ Սահակեան	1
« Քերոբ Քօջանեանց	1
« Նազարէթ Սահակեան	50
« Սիմէօն Տէր Մինասեանց	50
« Սարգիս Խաչատրեան	25